

թիւն ունի մազնիսական ասեղին շարժ-
մանցը այլայլութեան հետ :

Բայց ասկէց՝ ի զատ Ռոտովփոս ֆալզ
վեննայի երեխի բնագետն ու աստե-
ղարալիքը, երկրաշարժութեան ու հրա-
րուղիս լերանց պատճառներուն հետ վե-
րաբերութիւն մը կու տայ հիւսիսայ-
դին, աս կերպով։ Հիմա հասարակ կար-
ծիք է գիտնոց՝ որ Հիւսիսայդը իր եր-
կրային ըստուած մազնիսականութիւնը
կ'ընդունի հասարակածին ելեկտրական
հոսմանէն, և ուրիշ երկրիս ելեկտրա-
կան հոսմունքներէն։ Արդ շատ հաւա-
նական է որ աս հոսմունքները արեւուն
տաքութենէն ըլլան ըստ մեծի մասին,
բայց այն ներքին տաքութենէն ալ են՝
որ երկրիս կեղրոնական բոյնին չորս դին
կը գոյանան անլոյժ ու տաք նիւթերէ,
որ հողագնտոյս կեղենին տակը կը պըտը-
տին։ Աս հոսմունքներուն կերպ կերպ
փոխուելէն՝ աս մազնիսականութիւնն
ալ կը փոփոխուի։ Բայց փորձուած բան
է Հիւսիսայդին հաստատուն կցորդու-
թիւնը, երկրիս ելեկտրական հոսմանցը
կերպ կերպ փոփոխուելուն հետ, զոր
կը ցուցընէ մազնիսական ասեղին ճօ-
ճումը։ Ուրեմն յայտնի եղաւ ու ան-
ժխտելի աս երեսյթներուն իրարու հետ
վերաբերութիւն ունենալը, այս ինքն
Հիւսիսայդին, հրարուղիս լերանց, ու
երկրաշարժին։ Ֆալզ բնագիտին կար-
ծիքն է որ՝ աս վերաբերութիւնը իրար-
մէ պատճառած չէ, այլ ուրիշ պատահ-
մունքէ մը՝ որ ամենուն մէկտեղ պատ-
ճառ կ'ըլլայ։ Երկրիս կեղրոնական բոյ-
նին հրային հեղանիւթ ըլլալը կրնայ
բացատրել շատ մը վերի յիշուած երե-
ւոյթներուն նոյն ատեն հանդիպիլը։

ՍԿԻԶԲՆ Ա.ՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Ոմանք ՚ի Ս. Հարց և յեկեղեցական
ժամանակագրաց աշխարհիս ստեղծ-
ման սկիզբն՝ գարնանային հասարակա-
ծինատեն եղած կը հաշուեն. ըստ այսմ
և մեր Յայսմաւուրք ալ՝ արարչութեան

զիսաւոր գործը մարդոյն ստեղծումը՝
բուն զիշերահաւասարին օրը զնելով
արարչութեան առաջին օրն ալ կը սե-
պէն մարտի 5—17. և այսպէս կը պատ-
մեն, իրենց նախնի վարդապետաց խօս-
քերը հիւսելով։

Յայսմ աւուր սկիզբն է արարչու-
թեանցն Աստուծոյ, յորում աւուր ա-
րար Աստուած զերկինս և զերկիր։ Որ-
պէս ասէ Մովսէս. ի սկզբանէ արար
Աստուած զերկինն վերին, և զերկիրա
ներքին։ Խոկ՝ Հայր, Բանն՝ Որդի, է՝
Հոգին սուրբ Աստուած։ Նախ զերկինն
վերին հիմն դնէ, և ապա զերկիր. զի
որոց շինող Աստուած է՝ այնպէս է
պարտ լինել, 'ի վեր զհիմն դնել՝ որ-
պէս զլուխ մարդոյս՝ ի կազմուած մար-
մոյս։ Զոր օրինակ, շինողը ընդարձակ
բակի՝ զերկու եղերսն գծեն և անկիւ-
նավէմն կանգնեն և ապա զմիջոցսն
լնուն շինուածովք. նոյնպէս և Աստուած
զերկին 'ի վեր և զերկիր 'ի խոնարհ
կայացոյց, և ապա յետոյ զմիջոցս ելից
պատշաճ պիտոյիւրք։ Երկին երկու ինչ,
օդ և հուր. և երկիր երկու իր, հող և
ջուր. թշնամիք անհաշտելիք և սիրելիք
անքակտելիք։ Զորս տարերս նիւթեղէն
'ի պէտա շինութեան աշխարհիս արար
Աստուած. զի առանց հողոյ ոչ լինի
թանձրութիւն շշափելի, և ոչ առանց
ջրոյ կալումն և մածումն. և ոչ առանց
օդոյ շարժումն. և ոչ թարց հրոյ երե-
ւումն։ Երկիր որ է հող՝ ծանրութեամբն
զներքին վայրն էառ. և ջուր թեթե քան
զհող և ծանր քան զօդ՝ 'ի վերայ հողոյ՝
'ի ներքոյ օդոյ կայացաւ. և օդ որ է քա-
մի, և ասի հողմ, ծանր քան զհուր՝ և
թեթե քան զջուր, 'ի ներքոյ հրոյն, և
'ի վերայ ջրոյն ղետեղեցաւ։ Զի զիջու-
թիւն ջրոյ զոյ 'ի յօդն. որպէս 'ի կան-
թեղս է տեսանել, զջուրն և զձէթն և
զհուրն. և թէ հող ձգես 'ի կանթեղն՝ 'ի
տակն նստի։ Այսպէս և տարերս կայա-
ցան, որք են թեթե կը և ծանունք, թոյլ
և սուր, հակառակը և միաբանք։

Եւ երկիր էր աներեսյթ, զի ջուրն
ծածկեալ ուներ զերկիր։ Եւ անպատ-

ըաստ, զի պատրաստութիւն երկրի՝ զարդն իւր է. ծառք և տունկք, բոյսք և բանջարք՝ որ չեւ ես էին, խափան առնելով ջրոյն։ Զի դեռ չէր առեալ հրաման երկիր բղխել զրոյսս և զտունկս։ Այլ և աներեսոյթ էր երկիր. զի մարդ չէր որ տեանէր։ Եւ անպատրաստ, զի ոչ էին շինուածք և աւանք, զիւդք և քաղաքք։ Եւ խաւար՝ ի վերայ անդնդոց։ Խաւարն օդ է անլոյս և ստուեր իրաց ինչ։ Որպէս թէ ՚ի միջօրէի ժամու հարու որ վրան՝ և յամենայն կողմանց փակէ ըղմուտ լուսոյն և խոր խաւար լինի անդ։ Նոյնպէս այնչափ հեռաւորութիւն երկնի յերկրէ մեծագոյն առնելով ծոցս՝ ՚ի հարկէ պատահեալ լինէր խաւարն։ Զի թէպէտ ջրեղէն կամարն և հաստատութիւնդ չեւ ևս էր եղեալ՝ ՚ի միջոցիդ, այլ միայն թանձրութիւն մրրկեալ հողոյն ընդդէմ անկեալ երկնի՝ ստուեր առնէր երկրի. որպէս ամպն ընդդէմ արեգականն անկեալ շուք առնէ ՚ի վերայ երկրի. զոր ասէ խաւար՝ ի վերայ անդնդոց։ Եւ անդունդք՝ ղանբաւութիւն ջուրցն ասէ, ՚ի խորհուրդ առակաւոր զրոց իմաստից անյայանութեամբ ծածկեալ. և միգով անդիտութեան խաւարեալ։ Մինչև հանճարով իւրով այսինքն Հոգւովն սրբով Տէրն Քրիստոս եբաց. ըստ այնմ որ ասէ, թէ Հանճարով իւրով զանդունդս պատառեաց։

Եւ Հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վրայ ջուրց։ Վասն չորից պատճառաց. Նախ՝ զի դիցէ կենդանութիւն ՚ի հողն և ՚ի ջուրն, որ ՚ի մէջ ջրոյն ՚ի լող էր հողն, որպէս մանրամաղ փոշի ՚ի շողն։ Չոր օրինակ հաւ զրգայ ՚ի վերայ բունոյ և ձըւոցն. այնպէս և Հոգին Աստուծոյ զրդայր յամենայն ծնունդո ջրոյ և հողոյ, և ՚ի պատշաճ ժամու ետ ՚ի դուրս և տացէ՝ որպէս յամենունակ մառանէ։ Երկրորդ, զի սերմն ամենայն կենդանեաց մարմնաւորաց ջուր է. և զօրութեամբն Աստուծոյ Հոգւոյն գոյանայ կենդանին՝ մինչև ցայսօր և յաւիտեանս ժամանակաց, ըստ որում և ասէ Դաւիթ. Զայն տեառն ՚ի վերայ ջուրց։ Երրորդ զի նկարէր Հոգին զիսորհուրդ

սուրբ աւաղանին, որ ծնանի դորդիս մարդկան ջրով և հոգւով յորդեգրութիւն Հօրն երկնաւորի։ Չորրորդ, զի նա է որ շրջի յիմաստոս և ՚ի գիտութիւն սուրբ գրոց, որ և ելից զափեղերո իբրև զջուրս բազումն, որ ծածկեն զծովս. զորս բանայ և յայտնէ Հոգին սուրբ Աստուծ՝ ում և կամի։

Եւ ասաց Ա. Եղիցի լոյս։ Այս առաջն բարբառ անց առանց շրթանց շարժեց՝ և թարց լեզուի տատանելոյ, առանց ատամանց կափկափելոյ՝ և թարց բարբառ արձակելոյ։ Զի ոչ եթէ գործիք և օդապատք բան է կարծել զԱստուծոյ, այլ վասն զմեզ ուսուցանելոյ՝ վարի զիրն մերովս օրինակաւ։ Եւ դու տես, զի նախ զարարն դնէ և ապա զասացն՝ ՚ի ցոյցս գործոցն. զի յայտ առնէ զարարիչն ամենազօր և անաշխատ։ Զի կամելովս միայն՝ հրամանն զգործն կատարեաց. և իւրով յանկարծածագ բնութեամբն՝ լոյսն թռուցեալ ձգեցաւ ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն, ընդ խորութիւն և ընդ բարձրութիւն միջոցիդ երկնի և երկրի։ Եւ եղեւ օդն զուարթարար և հաճոյ աշաց հայելոյ։ ՚ի մի և ՚ի նոյն կէտ էր ասելն և առնելն Աստուծոյ՝ զերկինս և զերկիր։ Եւ է գործ առաջին աւուրն եօթն իրք. ՚է ազգ լոյս՝ և ՚է տարերք, և ժամանակ որ լինի ը։ Եւ ՚է ազգ լոյսն այս են. ան, հրեշտակացն էութիւնք. ՚է, լուսեղէն երկինն. ՚է, լոյս արեգականն և աստեղացն։ Եւ կոշեաց Աստուծած զլոյսն տիւ. և տեսեաց զերկոտասան ժամս աւուրն ՚ի վերայ երկրի։ Եւ զիսաւարն կոշեաց գիշեր, որ է գէշ իր, և կամ գէշ էրր, այս է, մութն ու խաւար։ Զմեծամեծ և զգլխաւոր արարածոց անուանսն ինքն արարիչն կոշեաց. և զմասնաւորաց՝ Ազամայ ետ կոշել յետոյ։ Լութիւն երկուցն՝ ՚ի յօդն է, ցերեկին և զիշերոցն. զի թոյլ է օդն և կրական, որ ՚ի ցերեկի սպիտակի և լուսաւորի. և ՚ի զիշերի խաւարի և մթանայ. որպէս ջուր որ տաքնայ և ցրտանայ՝ զի դրացի է օդոյն։ Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդեան օր մի։ Զի լոյս արեգականդ և աստեղացդ կեցեալ

և տեսեալ՝ի վերսոյ օդոյն ցիր և ցան՝ ըղ-
շափ աւուրն երկուտասան ժամն, և յե-
րեկոյին զնդեալ ժողովեալ կցաւ յար-
փին վերին, ուստի խղաւ առաւօտն։
Եւ եղեւ երեկոյ սպառուած աւուրն։ և
վաղորդեան աւարտ գիշերոյն, ընդ տիւ-
և ընդ զիշերն օր մի, իդէ ժամ։ Եւ այդ
սովորութիւն էառ կոչել օր և զերկուսն.
որպէս Դաւիթ ասէ թէ, Յօր աւուրբղիսէ
զբան, և թէ Աւուրբ իմ որպէս հովանի
անցին։ Երբայցիք և Ասորիք հետ բա-
նիս ասելոյ թէ եղեւ երեկոյ, զերիկոյն
դնեն սկիզբն աւուրն։ և անդէպ է 'ի
խաւարէ սկսանել աւուրն, այլ պարտ
է 'ի լուսոյն սկսանել։ Եւ թէ ընդէր ոչ
ասաց օր առաջին՝ որ առաւել՝ 'ի ճահ
էր անկանել՝ 'ի թիւ երկրորդին և այ-
լոցն։ — և այս վասն բազում պատճա-
ռաց . Նախ զի մի է ընութիւն աւուրցն՝
որ շրջապատէ զշարաթ՝ զամիս և զուա-
րի, ծագմամբ արեգականն։ Երկրորդ,
զանցաւորութիւն կենցաղոյս յայտ առ-
նէ, ըստ որումն ասէ, թէ հազար ամ
յաշս Տեառն որպէս օր երեկի զի էանց։
Երրորդ, զի զատեաց և մեկնեաց զմեծ
օր կիրակէին յայլոց աւուրցն, և կիրա-
կի ասի օրն առաջին։ Զի Աստուած՝ 'ի
կիրակէ էարկ զկամս իւր արարչական
զօրութեամբն։ Զորբորդ, զի նշանա-
կեաց զօրն վերջին՝ զաներեկն, որ նա
է օրն առաջին, զուգակից և հաւասար
լուսոյն՝ որ եղեւ՝ 'ի նմա. զի օրն լոյս
ասի։ Հինդերորդ, զի օրն սուրբ է և
պահպանութիւն օրինացն Աստուծոյ։
Վեցերորդ՝ զի պատուիչ է յարութեան
Քրիստոսի յամենայն դարս, մինչեւ լու-
սանայ յետինն և մինն աներեկ և ան-
փոխանորդ։

Դարձեալ և այս ևս գիտելի է, զի
օրս այս առաջին յորում գոյացաւ լոյն
եղական, ցուցանէ զօր ծննդեան Քրիս-
տոսի, և զօր աւետեաց առաջիկայ տար-
ւոյն։ Զի յորում աւուր լոյն եղական
գոյացաւ՝ 'ի նոյն պատկեր աւուր և
լոյն անեղական՝ 'ի մարմնի ծրաբեցաւ.
և ծննդեամբ՝ 'ի սուրբ կուսէն յերկրի
ծագեցաւ՝ և 'ի նոյն օր մկրտութեամբն՝
'ի Յորդանան Աստուած յայտնեցաւ։

Եւ դարձեալ գիտելի է, զի օրն առա-
ջին կիրակի էր. և օր աւետեաց սուրբ
Աստուածածնին յոմանց կիրակի ասա-
ցաւ. թէպէտ և մեք զշորեքշաբաթն
գիտեմք։ Եւ օր մկրտութեանն Քրիստո-
սի կիրակի էր. այլ և օր այլակերպու-
թեանն Քրիստոսի կիրակի էր, և օր
գալստեանն կիրակի, և օր յարութեանն
կիրակի. և օր միւսանգամ գալստեանն
Քրիստոսի՝ կիրակի։ Յօր ագասութեանն
Խրայէլի՝ 'ի Փարաւոնէ կիրակի, յոր-
ժամ՝ ի ծովու անցին. և օր արւշութեանն
օրինացն Աստուծոյ կիրակի, որ է օր
պենտակոսաէի, Հոգույն սրբոյ դալու-
տեանն։ Եւ կիրակին է օր պատուելի։
վասն այսր ամենայնի՝ է սկիզբն աշ-
խարհի՝ կատարած վերջի օրս այս տէ-
րունի։ Սա է օր կրկնի՝ և բազմապատկի
յայսմ յաւիտենի. 'ի վասու Քրիստոսի
Աստուծոյ մերոյ։

ԲՐԻՄ ՍՊԱՆԻԱՅԻ ԶՈՐԱՎԱՐԻ

Գնացեալ տարին իւր անհամար ա-
րիւնըուշ մեծ զոհից հետ մէկտեղ,
վերջնթեր օրն ալ մեծագոյն զոհ մ'ու-
նեցաւ, որ է Սպանիոյ Բրիմ զօրավա-
րը, որուն մահուան լուրը հասուցին
հեռագիրք ընդ բոլոր աշխարհ, ոչ թէ
պատերազմի գաշտին վրայ հայրենեաց
պաշտպանութեան համար թշնամեաց
զէմ կոռւելով, այլ իւր հայրենակից
գաւակցաց գնտակներուն տակն ընկ-
նալով։

Ծնաւ Բրիմ զօրավարը յամին 1811
Գաղալոնիոյ Ռէւս քաղաքը, և 1833
թուին իզապելլա թագուհւոյն գահա-
կալութեան պատճառաւ տեղի ունե-
ցած քաղաքական պատերազմին մէջ
իրեւ սպայ առաջին անգամ զէնք ա-
ռաւ. խնամակալ թագաւորամօր Մա-
րիամ Քրիստինա թագուհւոյն ներմ
կողմնակից հանդիսանալով, 1837 էն հա-
զարապետ (Colonel) անուանեցաւ. թա-
գաւորամայր խնամակալին փախստե-
նէն ետքը յառաջադիմական (Progress-